ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 955-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ավագանու 18.09.2025 թվականի N 59-Ա որոշումը և համայնքի ղեկավարի 24.11.2025 թվականի N 163 կարգադրությունը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Համաձայն մրցութային հանձնաժողովի N 01 արձանագրության՝ Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Պ. Սևակի փողոց, 55/1 հասցեում գտնվող, 05-002-0102-0129 կադաստրային ծածկագրով 0. 0048 հա բնակավայրի ընդհանուր օգտագործման հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթի հաղթող ճանաչել Մանուկ Առաքելյանին և կնքել վարձակալության պայմանագիր 99 տարի ժամանակով՝ 2025 թվականից 2124 թվականը:
   Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 16.157 ՀՀ դրամ:
   Հողամասի տարեկան վարձավճարի չափը կազմում է 28.000 ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի տարեկան հողի հարկի 2295%-ը: Տարեկան հողի հարկը կազմում է 122 ՀՀ դրամ:
   Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով, ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 30-ը:
   Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանմագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում:
   Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
   Երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը չի թույլատրվում առանց վարձակալի լրացուցիչ համաձայնության:
   Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում վարձավճարի չափը ավելանում է:

2. Նշված գումարը վճարել Ճամբարակ համայնքի բյուջե՝ 900185061257 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 01
ք. Ճամբարակ